



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Փաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ [kotayk@mta.gov.am](mailto:kotayk@mta.gov.am)

\_\_\_\_\_ N \_\_\_\_\_

### ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԿԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Միբելի՛ կանայք, աղջիկներ, մայրեր և քույրեր,

Ի սրտե շնորհավորում եմ զարնան զարթոնքն ազդարարող այս գեղեցիկ տոնի՝ մարտի 8-ի կապակցությամբ և բարեմաղթում, որ գեղեցկությունը, քնքշությունն ու երջանկությունը մշտապես ուղեկցեն ձեզ:

Այս տոնը ևս մեկ առիթ է՝ արժևորելու ձեզ՝ ոչ միայն որպես ընտանիքի հենք ու հենարան, այլ նաև պետականաշինության այս կարևորագույն փուլում մեր կողքով քայլելու, մեզ հետ հավասար պայքարելու և արարելու, ինչպես նաև հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ձեր ներգրավվածության և դերակատարության համար:

Իմացե՛ք, որ դուք պետության, ազգի, ընտանիքի անկյունաքարն եք:

Տոնական այս օրը մաղթում եմ բարձր տրամադրություն ձեզ և ձեր ընտանիքներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ